




Կարագիտակ



ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիւ 11




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կարագիտակ






ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ ❧ هانراکيداق ❧ HANRAKIDAGUE

ՇԱԲԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 11 || 15 ՄԱՐՏ 1903

ԱՌՍԶՆՈՐԴ ՎԱՋԱՌԱԿԱՆԱՑ



ՎԱՅՄ. ՊԱՏՐԻԿ ԷՖ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

ՎԱԵՄ. ՊԱՏՐԻԿ ԷՖ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

Մեր առեւտրական հրապարակին վրայ, ինչպէս նաեւ գաւառներու մէջ, այնքան ծանօթ դէմք մ'է Պատրիկ Էֆէնտին որ գրէթէ աւելորդ կը սեպենք երկարօրէն ծանօթացնել զինքը: Միայն ըսենք թէ բնիկ Կեսարացի ազնուական ու դարաւոր սերունդի մը՝ Կիւլպէնկեանց այս մեծանուն շառաւիղը իր ուսումնաւորած է Պասգիւղի Նուպար-Շահնազարեան վարժարանին եւ Ռուպէրթ Քուէճի մէջ եւ ապա Եւրոպա երթալով ընդարձակած է իր հմտութիւնը: Պատրիկ Էֆ. սահուն կերպով կը խօսի անգլ. եւ ֆրանս. լեզուները: Առեւտրական գործերու վրայ իր հմտութիւնք եւ ծանօթութիւնք այնքան ընդարձակ ու բազմակողմանի են որ մայրաքաղաքիս Առեւտրական Սենեակին իրեն անդամակից ընտրած է զինք: Երկրին վաճառականութեան մատուցած իր ծառայութիւնք Վեհ. Կայսեր կողմէ վարձատրուած են Ուլայի աստիճանաւ եւ Օսմանիէ ու Մէճիտիէ պատուանշաններով: Պատրիկ Էֆէնտի մեծ ձեռնհասութեամբ կը վարէ Կիւլպէնկեան եղբարք եւ Ընկերութիւն տան ընդարձակ գործառնութիւնները թիֆթիկի, աֆիոնի, գորգի, ներկի եւ այլ արտածելի նիւթերու վրայ: Մասնաւորապէս գորգի վրայ ընդարձակ գործառնութիւններ կը կատարէ Նիւ Եօրքի մէջ, ուր մասնաճիւղ ունի: Յիշենք նաեւ իր ներկայացուցիչները Պարսկաստանի եւ Տփղիսի հրապարակներուն վրայ, ինչպէս նաեւ Թուրքիոյ գրէթէ բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ: Այսքան բազմաճիւղ գործի մը վարիչն հարկաւ տաղանդաւոր մէկն է, եւ այն անսահման վարկն ու համակիր վերաբերումը, զոր Կիւլպէնկեան Էֆէնտի կը վայելէ Պոլսոյ եւ Եւրոպայի սեղանաւորական եւ առեւտրական հրապարակներուն վրայ, փայլուն ապացոյցներ են անոր տաղանդին եւ անոր պարկեշտ ու իմաստուն գործունէութեան:



ԱՌԵՒՏ ՈՒՐԻ ԿԵԱՆՔԸ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՒՏԵՐ

Սուցկի տալաններ. — Տակառներու յատուկ փայտին հետ-
զհետէ սուղնալուն պատճառաւ, Մ. Մունօ (Ալֆէ) հնարեց սուսկէ
տակառները, որք յանձնարարելի են իրենց ածնութեամբ, տո-
կունութեամբ եւ թեթեւութեամբ, որով փոխադրութեանց վրայ
երկու երրորդի խնայութիւն առաջ կուգայ: Սուսկէ տակառները,
նոյն իսկ լեցուն վիճակի մէջ, ջուրին վրայ կը լողան եւ կրնան
օգտակարապէս գործածուիլ իբր ազատարար գործիներ: Միւս կող-
մէ, սուսկէ տակառները վատ հաղորդիչ են տաքութեան, որով
գինին ու ջուրը կրնան անվթար պահուիլ տաք երկիրներու մէջ:

* * *

Նոր պահաւան մը. — Նիւ-Եօրքցի գործարանատէր մը հնա-
րեց նամակի պահարան մը զոր կարելի չէ բանալ առանց հետք
ձգելու: Մասնաւոր թուղթ մը կայ պահարանին մէջը, գունաւոր
նիւթով մը փակցուած: Եթէ ուզուի չոգիի վրայ բռնելով բանալ
պահարանը, գունաւոր նիւթը իսկոյն հեղուկ վիճակ մը կ'առնէ
և պահարանին վրայ կը տարածուի:

* * *

Կաթին ալիւրը. — Կարգ մը երկիրներու եւ մասնաւորապէս
Ամերիկայի մէջ բազմաթիւ փորձեր եղած էին կաթն արհեստական
կերպով չորցնելու եւ այս ձեւին տակ երկար ատեն պահելու հա-
մար: Շուէտացի ճարտարագէտ մը, Մ. Մարդէն Էքէնպէր, որ
բաւական միտք յոգնեցուցած էր այս խնդրին, վերջապէս նոր
մէթոտ մը գտեր է, որով կրնայ կաթին ալիւրը պատրաստել նոյն-
քան արագ՝ որքան խնայողական եղանակով մը: Այս մէթոտին
մանրամասնութիւնները հրատարակուած չեն տակաւին, որով կա-
րելի չէ արհեստական բացատրութիւններ տալ: Հեղինակն այժմ
կ'աշխատի մենաշնորհ մը ձեռք բերել: Կաթին ալիւրն երկու տե-
սակ է, մին առանց սիւրի եւ միւսը սերով: Բնական կաթ ու-
նենալու համար կը բաւէ ալիւրն իր ծանրութեան առ առաւելն
ինն անգամին չափ: Ջուրին մէջ դնել եւ այս խառնուրդը մաղմաղի
վրայ տաքցնել, միշտ խառնելով: Էքէնպէրի մէթոտը տակաւին

սկսած չէ շահագործուիլ: Միայն թէ Սոփոքոյի մէջ յատուկ գործարան մը կը պատրաստուի փորձեր ընելու համար: Դանիոյ կաթնավաճառ մեծ ընկերութիւնք շատ կը հետաքրքրուին այս փորձով, որուն արդիւնքին կ'սպասեն անհամբեր. զի երկրագործական ճարտարարուեստի այս ճիւղին մէջ կատարեալ յեղաշրջում մը պիտի բերէ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՐԳԵՐ

Իզմիրի Վաճառականութիւնը. — Արտածութեան եւ ներածութեան վրայ վիճակագրական հրահանգիչ ծանոթութիւններ, եւ ուսումնասիրութիւն մը, Թուրքիոյ անտառները բազմացնելու եւ փայտի վաճառականութիւնը զարգացնելու միջոցներուն վրայ:

* * *

Գորգաշինութիւնը Ասիոյ մէջ. — Հեղինակ Մ. Ն. Շավրոֆ, Տնօրէն Թիֆլիզի մետաքսի գործարանին, քարտէսով մը և 19 պատկերներով: Հրատարակեալ Ռուսիոյ երկրագործական նախարարութեան Վիճակագրական դիւանին կողմէ: Պատկերները ցոյց կուտան Գարաման ոչխարը, բուրդին փոխադրութիւնը, լուացումը, ներկարանները, գործասեղանները եւ հին ու նոր ընտիր գորգերու զանազան նմոշներ:

* * *

Թուրքիոյ առեւտրական անանուն ընկերութիւնները. — Մէթոսիկ կերպով դասաւորուած տեղեկութիւններ, Թուրքիոյ վաճառականութեան եւ նաւարկութեան վրայ:

* * *

Esportatori Italiani. — Միլանի Առեւտրական Թանգարանին այս հրատարակութիւնը կը պարունակէ Իտալացի գործարանատէրերու հասցէները, եւ զանազան տեղեկութիւններ Իտալերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն, Սպաներէն եւ Բորդուկէզերէն լեզուներով:

* * *

Մեսսաֆու եւ Մեսսաֆսեղեմք. — Այս գիրքը, որ Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն եւ Իտալերէն լեզուներով հրատարակուած է, և 900 երեսներէ կը բաղկանայ, կը խօսի 1. — Մետաքսի արտադրութեան եւ վաճառականութեան վրայ. 2. — Մետաք-

սեղէններու շինութեան վրայ եւ 3. — Մետաքսի վաճառականութեան վրայ, Կը պարունակէ նաեւ Ֆրանսայի եւ օտար երկիրներու մետաքսի գործարաններու հասցէները:

* * *

Վերլուծական հաշուակալութիւն.— Ժ. Մարշալէ, ուսուցիչ Լիօնի Առեւտրական Բարձրագոյն վարժարանին: Գին 3 ֆրանք:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԼՈՒԸՆՐ

Հայ վարպէս մը, Պրուսացի Մ. էֆ. Տէրվիշեան, Պուլկար կառավարութեան ծառայութեան մէջ մտած է, տարեկան 6,360 ֆր. թոշակով, բնակարանի ծախքէն զատ: Կ'վարէ Վրացայի դպրոցը, որ մետաքս հիւսելու արհեստը կը սովորեցնէ: Այս վարժարանը կախում ունի Պուլկարիոյ Առեւտրական եւ երկրագործական նախարարութենէն:

* * *

Նոր նաւարարութիւն մը ծնունդ առած է ի Բնիաթէվօ, Սօֆիայէ 8 քիլոմէթր հեռու: Միսը կ'աղեն և տակառներու մէջ դնելով կ'արտածեն գլխաւորապէս Համպուրկ: Պուլկար կառավարութիւնը, քաջալերութեան համար, որոշած է մաքսատուրք չառնել այս մսէն:


* * *

Արջառի եւ հունձի ապահովագրութիւնը, առաջին անգամ ըլլալով, մուտ գործեց ի Պուլկարիա: Բարիգեան Ապահովագրական ընկերութիւն մը գիւղացիին արջառը մահուան դէմ կ'ապահովագրէ որոշեալ ժամանակի մը համար եւ հունձքերը՝ սառին դէմ:

* * *

Ճերմակ մանանեխի հոլոց արտադրուեցաւ այս տարի Պուլկարիոյ մէջ: Այն վաճառականները, որք կ'փափաքին գնել, կրնան դիմել Սօֆիայի Առեւտրական Սենեկին որ ամէն տեղեկութիւն կու տայ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԴԱՍԸՆԹԱՑՔ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ

Հսկող մարմնին պատճօնը.— Կը քննէ ու կը ճշտէ տետրակները, սնտուկի հաշիւը եւ առեւտրական թուղթերը: Ամէն տարի տեղեկագիր կուտայ Ընդհանուր Ժողովին, մանրամասնօրէն նշանակելով հաշուեկշռին մէջ տեսած անկանոնութիւններն ու անճշտութիւնները, եւ պարզելով այն պատճառները որք չահաբաժիններուն բաշխման արգելք կ'ըլլան: Շահաբաժին (dividende) կ'ըսուի այն գումարը, որ բաժնետէքէրուն կը տրուի իբր շահ: Խիստ պատիժներ սահմանուած են անոնց որք կեղծ չահաբաժին կը վրձարեն, այսինքն ո՛չ թէ շահէն այլ դրամագլխէն: Հսկող մարմինն ուրիշ պաշտօն մ'ալ ունի: Եթէ պէտք տեսնէ, կրնայ նստի հրաւիրել բաժնետեարց ժողովը, եւ ընկերութեան լուծումը պահանջել:

Հսկող մարմնի անդամներուն պատասխանատուութիւնը.— Հսկող մարմնին անդամները կրնան պատասխանատու նկատուիլ տնօրէնին հետ ընկերութեան ըրած միասնեւրոն համար: Հսկող մարմինը կազմող բաժնետեարք, բոլոր բաժնետեարց ներկայացուցիչն ըլլալով, պատասխանատու են եթէ իրենց պաշտօնին կատարման մէջ թերութիւն գործեն: Հետեւապէս, հսկող մարմինն կատարած մնայուն հակակշռէն զատ, մէն մի բաժնետէք իրաւունք ունի լուսաբանութիւն պահանջել ընկերութեան կացութեան վրայ:

Պատժական տրամադրութիւնք.— Պատժական դատարանը դրամական տուգանք եւ մինչեւ իսկ բանտարկութիւն կը վճռէ չափէն աւելի բաժնեթուղթ հրապարակ հանողներուն դէմ, բաժնեթուղթ ծախելու համար կեղծ միջոցներով հասարակութիւնը խաբողներուն դէմ, հսկող մարմնին կազմութենէն առաջ գործառնութեան սկսող տնօրէնին դէմ, կեղծ հաշուեկշիռ պատրաստողներուն կամ կեղծ չահաբաժին վճարողներուն դէմ: Նոյնպէս դրամական տուգանքով եւ չրանտարկութեամբ կը պատժուին անոնք, որ իրենց չվերաբերած բաժնեթուղթերու տէք ձեւանալով, խաբախօրէն, մեծամասնութիւն կը գոյացնեն: Ընդհանուր ժողովներու մէջ: Այդ բաժնեթուղթերը փոխ տուողներն ալ նոյն պատ-

ժողն կենթարկուին : Յիշենք երկու կարեւոր տրամադրութիւններ ալ որք բաժնեթուղթով կազմուած քոմանտիդ ընկերութիւններու վերաբերեալ կանոնները կ'ամբողջացնեն : Երբ ընկերութեան մը գործերն աղէկ չեն երթար, բաժնետեարք պարտաւոր են ետ տալ իրենց ստացած շահաբաժինները, երբ հաստատուի թէ ո՛չ թէ շահէն այլ դրամագլխէն տրուած են այդ շահաբաժինները : — Ահա՛ պատասխանը. — Բաժնետեարք պարտաւոր են ետ տալ իրենց ստացած շահաբաժինը, երբ առած ժամանակին հաշուեկշիռ չկար, կամ այդ հաշուեկշիռը ցոյց կուտար այնպիսի վիճակ մը որ չէր ներեր շահաբաժին վճարել : Բաժնետեարք պարտաւոր են ետ տալ, վասն զի, այս պարագային մէջ, կամ չարամտօրէն վարուած և կամ ծանր թերութիւն մը գործած են հաւանելով ընդունիլ այդ շահաբաժինը : Սակայն պատասխանատուութենէ կը դադրին եթէ շահաբաժինին վճարման թուականէն 5 տարի անցնի : Երկրորդ տրամադրութեամբ, բաժնետեարք իրաւունք ունին գումարուիլ, եւ երբ ընկերային դրամագլխին առ նուազն ¹/30ը ներկայացնեն, կրնան մէկ կամ աւելի քննիչի պաշտօն տալ որ իրենց անուամբ և ծախքով դատ բանան տնօրէնին կամ հսկող մարմնոյ անդամներուն դէմ : Այս հաւաքական գործողութենէն զատ, իւրաքանչիւր բաժնետէր ալ իրաւունք ունի իր անուամբ դատ բանալու :


ՅՕԴ. 4. — ԱՆԱՆՈՒՆ ԱՌԵՏՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Նկարագիր. — Քոմանտիդ ընկերութիւնը, ըլլայ մինչեւ իսկ բաժնեթուղթով, անձերու ընկերակցութեան եւ դրամագլուխներու միացման կրկին հանգամանքն ունի միշտ : Մէկ կամ քանի մը ընկերներ կան, անձնապէս պատասխանատու, եւ քոմանտիդէսներ՝ միայն իրենց դրածին չափ պատասխանատու : Անանուն ընկերութիւնը դրամագլուխներու միացում մ'է բացարձակապէս : Ընկերներէն եւ ո՛չ մին իր անունը կուտայ ընկերութեան : Ասկէ ծագում առած է անանուն բառը : Ընկերութիւնը սովորաբար կը յորջորջուի իր ձեռնարկութեամբ, օրինակի համար, Քրէսի Ֆօնսիի Ընկերութիւնը, Ապահովագրական Ընկերութիւնը, Արեւելեան Կրկնաբաշտ Ընկերութիւնը, եւ այլն : Անանուն ընկերութեան դրամագլուխը բաժնեթուղթերու բաժնուած կ'ըլլայ միշտ : Ընկերները կամ բաժնետէրերը իրենց բաժնեթուղթին արժէքին չափ միայն պատասխանատու են : Անձնապէս և անսահման կերպով սրտասխանատու ընկերներու բացակայութիւնն էական եւ որոշիչ հանգա-

մանքն է անանուն ընկերութեան : Այս ձեւ ընկերութիւնը կը պատշաճի մեծ ձեռնարկութիւններու որք ահագին դրամազուլութիւնը պէտք ունին , եւ որոց մէջ անձնական պատասխանատուութիւնը կարելի չէ , գործողութեանց կարեւորութեան պատճառաւ : Անանուն ընկերութեան ձեւին տակ է որ կազմուած է Պանք տը Ֆրանսը , Բրէտի Ֆոնսիէն , Երկաթուղեաց մեծ ընկերութիւնք , եւայլն :

Արտոնութիւն . — 1867 Յուլիս 24ի օրէնքը . — Ֆրանսայի մէջ , ըստ Առեւտրական Օրինագրքի , անանուն ընկերութիւն մը չէր կրնար կազմուիլ առանց արտոնութեան : Կը քննուէին ընկերութեան գոյութեան պայմաններն եւ անոր կանոնադիրն եւ նպաստաւոր տեղեկագրի մը վրայ , ընկերութեան կազմութիւնը կ'արտօնուէր մասնաւոր հրամանագրով : Այս սկզբունքը նախապէս բարեփոխուեցաւ 1863 Մայիս 23ի օրէնքով , որ կը թոյլատրէր , առանց արտոնութիւն առնելու , կազմել անանուն ընկերութիւններ որոց մէջ ընկերներն իրենց դրած գումարին չափ միայն պատասխանատու կը ճանչցուէին : Այս ընկերութիւնք , որ սահմանափակ պատասխանատուութիւն ունեցող բնկերութիւններ (sociétés à responsabilité limitée) կը կոչուէին , չէին կրնար 20 միլիոնէ վեր դրամազուլիս ունենալ : 1867ի օրէնքը քայլ մ'եւս առաջ գնաց : Ընդհանուր կերպով վերցուց արտոնութիւնն անանուն ընկերութեանց համար որք այնուհետեւ կրնային կազմուիլ Քօլեքթիֆ կամ Քօմանսիդ ընկերութեանց պէս , այսինքն երկու կողմանց հաւանութեամբ : Սահմանափակ պատասխանատուութիւն ունեցող ընկերութեանց վրայ օրէնքը ջնջուեցաւ : Արդարեւ այն ընկերութիւնք այլ եւս չունին գոյութեան պատճառ , քանի որ արտոնութեան ձեւակերպութիւն չկայ այլ ևս ի Ֆրանսա : Անանուն ընկերութիւնք ամէն պարագայի մէջ կրնան կազմուիլ մասնաւոր պայմանագրութեամբ : Այս պայմանագրութիւնը նօտարութեան կողմէ վաւերացնելու անհրաժեշտ պէտք չկայ : Անանուն ընկերութեանց վրայ Առեւտրական Օրինագրքին միւս էական սկզբունքները պահուած են : Ընկերներն իրենց դրած գումարին չափ միայն պատասխանատու են : Ընկերային անուն չկայ , ընկերներէն մէկուն կամ մի քանիին անուամբ կազմուած , Ընկերային դրամազուլիսը բաժնեթուղթերու բաժնուած է միշտ , եւ այդ բաժնեթուղթերն անուանական կամ բերողին յանձնելի են , կանոնադրին եւ օրէնքին տրամադրութիւնք ո'ր ձեւն որ արտօնած են : Վերջապէս , վարիչները կը տարբերին Քօմանտիդ ընկերութեան վարիչներէն , և անձնապէս պատասխանատու չեն յանուն ընկերութեան իրենց կատարած գործերուն համար : 1867ի օրէնքն այս ընդհանուր

սկզբունքներուն վրայ կ'աւելցնէ կարգ մը տրամադրութիւններ որոց նպատակն է բաժնետէրերուն եւ երրորդներու տալ այն երաշխաւորութիւնները զորս նոյն ընկերութիւնք կը ներկայացնէին արտօնութիւն առնելու համար մասնաւոր քննութեան ենթարկուած ատեններն :



ԽԱՆՈՒԵՐ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր ծանօթութիւններ. — Խահուէի հունձը. — Մշակութեան զարգացումը. — Առեւտրական տեսակները. — Կեղծը. — Վաճառականութիւնը

Առեւտրական տեսակներ. — Այն խահուէները, որոց վրայ առուտուր կ'ըլլայ, առաջ կուգան միատեսակ խահուէնիէ մը, այն է *coffea arabica*: Ուրիշ տեսակի մը՝ *coffea liberia*ի՝ մշակութիւնը իբր փորձ միայն կը կատարուի: Բայց այս խահուէները, թէեւ միեւնոյն տունկէն առաջ եկած են, մեծ տարբերութիւն ունին իրարմէ :

Ահաւասիկ առեւտրական տեսակներու գլխաւոր հանգամանքը :

Հաիդի. — Անհաւասար հատիկներ, զատ զատ գոյներով, շատ անգամ ճզմուած և մանր քարերով խառն: Ախորժահամ: Սէն Մարք և Մօլ լաւագոյն տեսակներն են: Յետոյ կուգան Կօնաիվ, Բօռ տը Բէ, Բօրդօ Բլադա, Եւայլն:

Ճաւնաիֆա. — Հատիկները խոշոր, բաց կանաչ: Ախորժելի հոտ: Անգլիոյ մէջ, Մօքայէն անմիջապէս ետքը կուգայ:

Բօրդօ Ռիֆօ. — Կապոյտի զարնող, Նրբամաշկը քիչ մը չէկ:

Մարդիւնիֆ. — Լաւագոյն Մօքաներէն անմիջապէս ետքը կուգայ, Հատիկները խոշոր և քիչ մը երկար: Աւելի կամ նուազ մութ կանաչ: Նրբամաշկ արծաթափայլ:

Կուսապուր. — Այս տեսակը նախորդին կը նմանի, բայց հատիկներն աւելի խոշոր են, և հոտն աւելի նուրբ: Այս խահուէն երկու տեսակ է. Ապիդան եւ Պօնիֆիօր: Առաջինը իր արծաթափայլ Նրբամաշկէն հանուելով, նոյնքան և երբեմն աւելի սուղ կը ծախուի, որքան կը ծախուէր Մարդիւնիքի խահուէն, երբ տաճարին երկրաշարժէն աւերած չէր: Կուսապուրի խահուէներն Եւրոպա կը բերուին ու կը ծախուին Մարդիւնիքի խահուէ անունով:

Բուպա. — Բուպայի խահուէները կը բաղկանան խոշոր եւ

կանաչագոյն հատիկներէ և կը բաժնուին քանի մը տեսակներու . գերազանց , առաջին , երկրորդ , երրորդ , եւայլն . Ընտիրներուն եւ սովորականներուն միջեւ ահագին տարբերութիւն կայ : Առաջինները կը բաղկանան հաւասար , լայն , տափակ և արծաթափայլ մաշկով ծածկուած հատիկներէ , մինչ երկրորդները կը բաղկանան ճերմակի կամ սեւի զարնող հատիկներէ : Կղզիին հարաւային մասին մէջ քաղուած խահուէն մեծաքանակ կը զրկուի Ֆրանսա 300-400 քիլօնոց տակառներով : Քուպայի խահուէններուն մեծ մասը Ֆրանսայէ կ'արտածուի ուրիշ երկիրներ :

Կուադիմաչա . — Այս տեսակը կը բաղկանայ քիչ մը խորշումած հատիկներէ և զանազան տեսակներ ունի : Հազուադիւր չէ միեւնոյն պարկին մէջ գտնել կանաչ հատիկներ դեղիններու հետ խառն :

Նիխարակուա . — Կը բաղկանայ բաւական խոշոր և քիչ մը կլոր հատիկներէ : Ոմանք կարմիր հետք մ'ունին իրենց երկայնքին վրայ :

Սալանիչա . — Ճիշտ Նիքարակուայի խահուէին կը նմանի :

Քօսդա Ռիֆա . — Մութ կանաչ գոյնով հատիկներ :

Կուաչա եւ Բօրօ Քապիլո . — Այս երկու տեսակները շատ կը նմանին իրարու : Կը բաղկանան մաքուր , կանոնաւոր եւ քիչ մը երկար ձեւով հատիկներէ :

Մարաֆայօ . — Կլոր և կանոնաւոր հատիկներ :

Քարապաչա եւ Հուանաֆա . — Այս երկու տեսակներն առեւտրական մեծ կարեւորութիւն մը չունին :

Քայէն . — Տափակ ու լայն հատիկներ , արծաթափայլ մաշկով : Գոյն՝ աղօտ կանաչ :

Պրագիլիա . — խահուէն Պրագիլիոյ ամէնէն կարեւոր բերքն է և իր յարտաքին վաճառականութեան կարեւոր տարրը կը կազմէ : Պրագիլիա աշխարհի բովանդակ ապառումին գրեթէ կէսն ինք կը հայթայթէ : խահուէի մշակութիւնն Ամազոնէն կը տարածուի Սաօ-Բաուի գաւառն և ծովեզրէն մինչեւ երկրին արեւմտեան սահմանները , 653,400 քառակուսի քիլօմէդրէ աւելի մակերեսովի մը վրայ : Արտադրութեան գլխաւոր կեդրոններն են Ռիօ - Նանէյրօ , Սաօ-Բաուի , Պահիա , Սէաուա , եւ Մինա-ժէրաէ : Արտածման նաւահանգիստներն են Ռիօ , Սանդօ , Պահիա եւ Սէարա : Սանդոյի արտադրութիւնը կը բարգաւաճի և այդ տեղէն եկած խահուէններն հետզհետէ կը գնահատուին : Պրագիլիոյ խահուէի հատիկները կանաչ կամ տոգոյն կանաչ կ'ըլլան և բաւական երկար են : Աւասիկ Պրագիլիոյ խահուէին զանազան տեսակներուն գլխաւոր հանգամանքը :

(Շար .)

ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՑԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. — Ֆրանսերէն

a.	accepté	ընդունեցի
accep ^{on}	acceptation	ընդունիլ
b ^t	billet	տոմսակ, մուրհակ
b. à r.	billet à recevoir	ընդունելի տոմսակ
b. à p.	billet à payer	վճարելի »
brl.	baril	տակառակ (վառէլ)
b ^{que}	barrique	աւելի փոքր տակառակ
b.	balle	հակ
b ^{ot}	ballot	պզտիկ հակ (տէնկճէ)
B. P. F.	bon pour francs	մուրհակ վասն ... ֆրանքի
b ^t	brut	ապրայով
c	centime	սանթիմ
c ^e	caisse	անտուկ
C ^{ie}	compagnie	ընկերութիւն
c ^t	courant	ընթացիկ, այս ամիս
c ^{on}	commission	յանձնարարողչէք
c ^{aire}	commissionnaire	յանձնառու
c ^s	cours	գին, ընթացք
d	de date	թուականէն
dz	douzaine	տուզինա
do	dito	նոյն
der	dernier	վերջին, անցեալ
esc ^{te}	escompte	զեղչ
f ^{re}	facture	հաշուեցոյց
f ^r	franc	ֆրանք
f. à b.	franco à bord	մինչեւ շոգենաւ առանց ծախուց
g ^e	gramme	կրամ
id	idem	նոյն
j ^{er}	janvier	յունուար
j ^e	jeune	փոքր, կրտսեր
J ^r	jour	օր
Ko	kilo	քիլօ
l ^e	litre	լիտրա
lb	livre	լիպրա

M ^{ses}	marchandises	ապրանք
M ^{on}	maison de commerce	վաճառատուն
M ^e	mètre	մէդր
m/	mon	իմ
M .	Monsieur	պարոն
md	marchand	վաճառական
MM .	messieurs	պարոնայք
Ms	mois	ամիս
N . B .	nota bene	ծանօթութիւն
nov ^{bre}	novembre	նոյեմբեր
ns	nous	մենք
n/v	notre ville	մեր քաղաքը, տեղացի
negt	négociant	վաճառական
n ^e	numéro	թիւ
oct ^{bre}	octobre	հոկտեմբեր
o/	ordre	ի հրամանի
p . pon	par procuration	վասն . . . ի, փոխանորդր.
p ^d	pied	ստք (չափ)
p ^o	pouce	բթամատ (չափ)
I ^{er}	premier	առաջին
p ^{ain}	prochain	յառաջիկայ, գալ
p . s .	post-scriptum	յետ գրութեան
q ^{er}	quartier	քառորդ մաս
q ^{al}	quintal	կենդինար
q ^x	quintaux	» (յ.քն.)
r ^e	rame	պրակ (թուղթի)
7 ^{bre}	septembre	սեպտեմբեր
S ^r	sieur	պարոն, տէր
n/S ^r	notre sieur	մեր » »
S . E . ou O .	sauf, erreurs ou o- missions	բացի սխալմունքէ կամ մոռացումէ
t ^{eau}	tonneau	տակառ
t ^{te}	traite	փոխգիր
t . s . v . p .	tournez s'il vous plait	նամակին միւս երեսը կար- դալ
T ^e	tonne	չափ
v/	votre	ձեր
v/v	votre ville	ձեր քաղաքը
val	valeur	արժէք, փոխարժէք
X ^{bre}	décembre	դեկտեմբեր
1 ^m	1 Mètre	1 մէդր

Պ Ա Ն Ք Ա

Է.

ՊԱՆՔԱՆԵՐՈՒՆ ՄԱՏՈՒՅԱԾ ԸՆԴՀ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պանքան աշխատութեան բաժանումի բարերար մէկ արդիւնքն է: Առանց անոր, վաճառականը պիտի ստիպուէր իր վճարումներն ու գանձումներն իր ձեռքով ընել, հնչուն դրամ ղրկելով կամ տոնելով եւ այդ առաքումին ծախքերը տուածելով եւայլն: Փոխառուներու եւ փոխատուներու յարաբերութիւնք ալ շատ պիտի դժուարանային: Ատոնք ի հարկէ զիրար չեն ճանչնար: Եւ ահա պանքէռը մէջ կը մտնէ, իբր միութեան գիծ: Վերջապէս պանքէռը, սեղանաւորական ընկերութեան մէջ, ուրիշ պաշտօն մ'ալ ունի որ յաճախ աննշմարելի կ'անցնի: Պանքա մը կրնանք նկատել իբր ջղային կեդրոն մը, որու կը յանգի զգայուն ջիղերու ամբողջ ցանց մը, այնպէս որ այդ միջավայրէն անցնող ամէն երեւոյթ իր ցոլացումը կ'ունենայ: Ասով, պանքէռն իր յաճախորդներուն համար ջերմաչափ մը, ազդարար մը կ'ըլլայ, որու նշանները կ'երեւին զեղջի սակին բարձրացումովը կամ իջնելովը: Պանքան, հարստութեանց չըջաբերութեան գործիքն ըլլալով գերազանցապէս, պարտաւորուած է ամէն անբնական իրողութեան նըշանակութիւնը փնտռել եւ ապահով ախտազննութիւն մը կատարել ընդհանուր գործերու վրայ:

Ը.

ՊԱՆՔԱՆԵՐՈՒ ԴՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հակառակ այն բարձր ու փափուկ պաշտօնին, զոր կը կատարեն առեւտրական պանքաները, իրենց գոյութեան պայմաններն ուրիշ առեւտրական ձեռնարկներու գոյութեան պայմաններէն չեն տարբերիր: Կարելի չէ մասնաւոր նկարագիր մը կամ հանգամանք մը վերագրել պանքայի առուտուրին, ո՛չ ալ իր տնտեսական դերին մէջ տեսնել պատճառ մը կամ պատրուակ մը օտար միջամտութեան՝ ինչ ինչ դժուարին պարագաներու մէջ, օրինակի համար կարգ մը հաստատութիւններու ծանր սխալներէն առաջ եկած տնտեսական տագնապներու ատեն: Ինչպէս առեւտրական ամէն գործի մէջ, հոս ալ պէտք է թողուլ որ յանցանքը գործող-

ներն իրենք կրեն անոր հետեւութիւնները: Ասիկա միակ ազդու միջոցն է անխոհեմութեանց վերադարձն արգելելու: Հետեւապէս պանքէտը պէտք է իր պաշտօնը կատարէ ուղածին պէս: Պէտք է ամէն բանէ առաջ ի՛ր վրայ յոյս դնէ եւ իր գործերուն պատասխանատու նկատէ ինքզինքը: Պանքաներու այս ինչ կամ այն ինչ տեսակին կեանքի մասնաւոր պայմանները կրնան տարբերիլ, թէեւ ընդհանուր պայմանները նոյն ըլլան: Աւանդի վրայ գործ ընող պանքաներու համար, է՛ն կարեւոր կէտն է ներքին վարչութիւնը, որ պէտք է հոգ տանի ամենամեծ ճշտութեամբ գործելու եւ եղած փոխառութիւններն ապահով ձեռնարկներու մէջ գործածելու: Կարգապահութիւնը, որ ամէն տեղ կարեւոր է, բացարձակապէս անհրաժեշտ է հոս: Այն պանքաներու համար, որք վարկի վրայ գործ կ'ընեն թուղթ գեղջելով, արժէթուղթերու վրայ փոխատուութիւն ընելով եւայլն, առաջին պայմանն է մատուցումի եւ խընդրանքի օրէնքին ուշ դնել: Դրամագեղջի ամէն արհեստական բարձրացում կամ անկում յոռի հետեւանքներ կ'ունենայ, մանաւանդ պանքէտին համար որ սխալ հասկցուած շահու մը թելադրութիւններուն կը հնազանդի: Պանքայի մը սովորաբար կատարած գործողութիւններուն բնութիւնը ցոյց կուտայ թէ իրեն յանձնուած դրամագլուխները ի՛նչ բանի կը յատկացնէ: Դրամագլուխներու այս յատկացումը մեծ կարեւորութիւն ունի: Ի տես կամ կարճ պայմանաժամով յանձնելի աւանդ դրամներ կարճ պայմանաժամով թուղթեր գեղջելու միայն կրնան գործածուիլ: Պէտք է որ աւանդին ու փոխատուութեան պայմանաժամերն ուղղակի համեմատութիւն ունենան: Ահա ասոր համար է որ բոլորովին զատ դասակարգի մէջ դնելու է այն պանքաները որոց գլխաւոր զբաղումն է կալուածի վրայ փոխատուութիւն ընել: Կալուածական փոխատուութիւնները երկար պայմանաժամերով կը կնքուին: Կալուածական դրամագլխի վերածուած շարժուն դրամագլխի մը վերականգնութիւնը շատ դանդաղօրէն կը կատարուի ընդհանրապէս: Ասկէ կը բխի սա պարզ ու ծանօթ պայմանը թէ երկար պայմանաժամերով փոխ առնուած դրամագլուխները միայն գործածելու է այս կարգի փոխատուութեանց: (Տեսէք՝ Կալուածական վարկ՝ Առեւտրական Բառարանի մէջ): Ուրեմն, պանքա մը, իր յանձնառութիւնները միշտ կարենալ կատարելու համար, պէտք է կազմակերպէ տրամադրելի գումարներու շրջան մը, ո՛չ միայն ունեցած աւանդներուն ընդհանուր քանակութեան վրայ հիմնուած, այլ նաեւ անոնց փոխադարձ տեւողութեան վրայ: Եթէ իր դրամագլուխներուն տայ այնպիսի սահմանումներ, որք ներդաշնակ չըլլան այս ընդհանուր սկզբունքին հետ, իր գոյքին իրական վի-

ճակին հակառակ, պիտի ստիպուի իր կիսեները փակել: Ծիշտ է թէ վերստին զեղջելու (réescompter) ապահովութիւնը կայ, բայց եթէ անիկա իրական ծառայութիւն մը կը մատուցանէ իրօք բնական վիճակին մէջ եւ մասնաւոր պարագաներու տակ, լայն սահմանի մը վրայ չի կրնար գործել, առանց բարձրացնելու զեղջի սակը: Երբ պանքա մը միայն առևտրական պանքայի յատուկ գործեր կ'ընէ, անոր պետին կը բաւէ ուշադիր գտնուիլ մէկ կողմէ դրամագլուխներու եւ միւս կողմէ առուտուրի շարժումին: Բայց եթէ անիկա խառն պանքա մ'է, լայսինքն շահադիտական գործեր ալ կ'ընէ. զայն վարելն աւելի կը դժուարանայ եւ մեծ խոհեմութիւն կը պահանջէ: Գիտնալու է ի հարկին գործառնութիւն մը զոնեւ ուրիշ կողմէ մը շահելու համար: Արդ, դիւրին շահերն յաճախ ազետալի հրապոյր մ'ունին: Ծահադիտութեան մէջ նետուող պանքա մը կը բռնաբարէ այն լուելեայն պայմանադրութիւնը, որ զինքը կը կապէ աւանդատուններուն հետ: Այս տեսակ պանքաները կ'ապրին ճիշտ այն անհատին պէս որ փոխանակ իր բնախօսական գործութիւնը բնական սնունդներով եւ կանոնաւոր ճաշերով ապահովելու, վայրկեանական ոյժ մը կը պահէ ալքօշներով կամ ուրիշ արհեստական միջոցներով: Մահը ժամանակի կամ արկածի մը խնդիր է լոկ: Պանքէռը, չունենալով անձնական այնպիսի հարստութիւն մը որ իր միջոցներով միայն գոհանայ, ուրիշ դրամագլուխներ փոխ կ'առնէ: Կարելի չէ ուրեմն ըսել թէ տոկոսին բարձրացումէն կրնայ շահ ունենալ: Այս խնդիրն աւելի լաւ դատելու համար հարկ է յիշել թէ պանքէռը միջնորդ մ'է, եւ ասկէ ծնունդ կ'առնէ ուրիշ խնդիր մը որուն կարեւորութիւնն աւելի մեծ է: Իրերը լոկ մաթեմատիքական տեսակէտէն նկատելով, դրամագլուխ մը անօգուտ պիտի ըլլար պանքայի մը համար, որովհետեւ իր նպատակն է ի նպաստ իրեն շահագործել փոխ կամ աւանդ դրուած դրամագլուխները: Տեսականապէս ճիշտ է աս, պայմանաւ սակայն որ պանքէռին ըրած գործերէն փնաս առաջ չգայ: Այս պայմանն յիշել կը բաւէ ապացուցանելու համար որ անոր իրականացումն անկարելի ըլլալով, պանքային համար կարեւոր է յատուկ դրամագլուխ մը ունենալ, նիւթական տեսակէտով փնասները գոցելու, եւ բարոյական տեսակէտով վստահութիւն ներշնչելու համար, որ ամէն վարկի հիմն է: Ուստի, ի՛նչ չափով որ կը մեծնան փնասի հաւանականութիւնները, նոյն չափով պէտք է հետզհետէ մեծնայ այդ դրամագլուխը:

Արդէն ըսինք որ շահադիտութեան պանքաները, իրենց դիւրաւ առնական գործերուն պատճառաւ, միայն իրենց դրամագլուխները գործածելու են: Գալով շրջաբերութեան պանքաներու անոնց գոյութեան պայմաններն ամէնէն աւելի խնդրոյ առարկայ եղած են ամէն երկրի մէջ:

(Շար.)

ՀԱՒ ԲԱԴՐՕՆԸ

Կը հսկէ իր պաշտօնեաներուն վրայ :

Կը գնահատէ անոնց արժանիքը :

Դրամագլուխ մը կը նկատէ անոնց աշխատութիւնը :

Չանոնք անձնուէր գործակիցներ կ'ընէ իրեն :

Կը յարգէ անոնց արժանապատուութիւնը :

Հաշիւէ եւ տոմարէ կը հասկընայ :

Առեւտրական օրէնքներու հըմուտ կ'ըլլայ :

Տնտեսագիտական սկզբունքներու համաձայն կը գործէ :

Անուղիղ միջոցներով չի մըրցիր :

Խնդրանքին պահանջումները կ'ուսումնասիրէ :

Մատուցումին պայմանները կը սորվի :

ՀԱՒ ՊԱՇՏՕՆԵՅԱՆ

Հաւ հատուցում կ'ստանայ :

Միշտ կը յառաջանայ :

Դժուարաւ կը ճամբուի :

Կրնայ աւելի շահաւէտ պաշտօն գտնել :

Բարեկեցիկ վիճակ մը կ'ապահովէ :

Յարգանք ու վստահութիւն կը ներշնչէ :

Կը ջանայ իր պաշտօնին յատուկ նոր տեղեկութիւններ ըստանալ միշտ :

Ուղղութենէ չի չեղիր :

Գործը, որուն կ'աշխատի, իբր իր գործը կը նկատէ :

Փորձառու մարդերէ կ'օգտուի :

Հրապարակին պահանջումները կ'ուսումնասիրէ :

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ՔԱՍԻՄԷ սիրուն յօգուած մը ձիաւոր ՔԱՍԻՄՈՐԴԻԻ լուսանկարովը միասին :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին :

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի գատտէսի, Թիւ 38, Իզտամ լրագրին դէմ

բառա-դօլիսին եւն. : Կը ծառայէ պատրաստելու ֆիւքսաներկը (fuchsine) : Քրփումի անիլինը կը կազմուի այն նիւթերէն որք կը վտուին ֆիւքսաներկի պատրաստութեան ատեն : Կ'եռայ 193⁰ եւ 198⁰ սանդիկրատի միջեւ եւ օրդօ ու բառա-դօլիսին չի պարունակեր : Կը ծառայէ քրքումի (զաֆրան) գոյն շինելու :

4.—Անիլինը արհեստական շատ մը գունատու նիւթերու պատրաստութեան մեկնակէտն է : Կը ծառայէ նաեւ թէ՛ գոյներու եւ թէ՛ դեղերու կամ արհեստական հոտաւէտ նիւթերու ձառնապատրաստութեան համար գործածուած ուրիշ նախանիւթերու շինութեան : Ահագին քանակութեամբ անիլին կը գործածուի հիւսելի թելեր ներկելու համար : Անիլին արտադրող գլխաւոր երկիրներն են Անգլիա, Գերմանիա եւ Ֆրանսա : Սպառումին ճիշդ քանակութիւնն յայտնի չէ, վասնզի մաքսատանց մէջ քիմիական արտադրութիւններու դասակարգին հետ կը խառնուին : Միայն թէ վըստահաբար կրնայ ըսուիլ որ անիլինի սպառումը շատ մեծ է եւ միլիոններով քիլոյի կը հասնի : Անիլինի գինն երթալով ինկած է : 1876ին 4 Փր. էր, բայց այսօր մինչեւ 1.25ի իջած է :

ԱՆԻՍՈՆ. — Հովանոցաւորներու (Ombellifères) ընտանիքէն *pimpinella anisum* տունկին պտուղն է, հաւկթաձեւ, ստորոտը լայն եւ գագաթը նեղ, պզտիկ ցցունքով մը վերջացած : Մակերեսին վրայ, որ գորշագոյն կանաչ է, կարճ եւ կարծր մաղեր տնկուած են : Պտուղը բաժնուած է երկու հաւասար մասերու, որոնք ընդհանրապէս փակած են իրարու եւ կը կրեն իւրաքանչիւրն հինգ հաւասար կողմեր : Անիսոնի պտուղը անուշ համ մը եւ հոտ մ'ունի : Տեսակ տեսակ անիսոններ կան, ինչպէս Ռուսիոյ անիսօնը որ սեւի կը զարնէ եւ շատ յարգի չէ, Ալպիի անիսոնը, որ ճերմակի կը զարնէ եւ շատ անուշ կը հոտի, Դուռեմի անիսոնը, որ կանաչ է եւ աւելի անուշահամ, Մալդայի կամ Սպանիոյ անիսոնը որ մոխրագոյն կանաչ է եւ շատ յարգի է : Անիսոնը կը գործածուի իբր ակորժակ բացող դեղ, մէկ լիդրա ջուրին մէջ 10 կրամ թրջող դնելով : Երբեմն ալ պզտիկ դեղահատերու ձեւով կը գործածուի մարսողութիւնը դիւրացնելու եւ բերնին մէջ անուշ հոտ մը սփռելու համար : Անիսոնի պտուղներն իրենց յատկութիւնները կը պարտին ցնդական իւղի մը որ 2⁰/₀ համեմատութեամբ կը գտնուի իրենց բաղադրութեան մէջ : Այս տունկին հունտերը, որք երկայնածեւ են եւ գնտասեղի մը գլխին չափ խոշոր, ոգելից ըմպելի շինողներու կողմէ միայն կը գործածուին : Անիսոնը կը

մշակուի ֆրանսայի, Սպանիոյ, Իտալիոյ, Արեւելքի և մանաւանդ Ռուսիոյ մէջ: Մալդա և Սպանիա երբեմն շատ յարգի անխոն մը կ'արտադրէին: Ամէնէն սովորականներն են Արեւելքի եւ Ռուսիոյ անխոնները: Դուռի և Ալպիի անխոնները կը գործածուին անխոն սօղի պատրաստելու: Ապսէնդ շինելու ալ կը գործածուին: Ֆրանսայի եւ մանաւանդ Ռուսիոյ մէջ անխոնի ոգի կ'արտադրուի: Անխոն կը գործածուի նաեւ անուշեղէններու եւ անուշահոտութեանց մէջ:

ԱՆԻՍՈՂԻ. — Հեղուկ մը որուն գլխաւոր համեմը կը հայթայթէ անխոնի հունտը: Ընտիր անխոնի շինելու համար կանաչ անխոնը, աստղանիստը (badiane), դինձը (ֆիշմիշ) և ուղեանը (րեզեմե) կը խառնեն քիչ մը յամպարուկի, Սէյլանի կասիայի (թաւգին), մշկընկոյզի (հիսթիսթան ճեմիլի) եւ որոշ չափով օշարակի ու ջուրի հետ եւ կը զտեն ընտիր ալքօլի մէջ: Ոգելից ըմպելիքի բոլոր գործարանները կը պատրաստեն այս օղին որ շատ տարածուած է ի Ֆրանսա եւ այլուր: Պօրոս կ'արտածէ մեծաքանակ: Ֆրանսական անխոնիին շաքարը շատ և ալքօլը քիչ կ'ըլլայ սովորաբար: Իսկ Հոլանտայի անխոնին, որ համբաւաւոր է, նուազ շաքար եւ աւելի ալքօլ կը պարունակէ:

ԱՆԿԶ (amiant). — Կիրի եւ մականեղիայի կայծքարատ (silicate), որ սովորաբար պղտիկ քանակութեամբ ալիւմին կը պարունակէ: Կը գտնուի օժաժայռերու ճեղքուածներուն մէջ: Մերթ թանձր կ'ըլլայ եւ մերթ մետաքսի թելերուն պէս կակուղ ու նուրբ: Դոյնը փոփոխական է: Մերթ բոլորովին ճերմակ, մերթ կանաչագոյն, կապոյտ կամ մոխրագոյն: Չայրի: Մեծ քանակութեամբ կը գտնուի արեւմտեան Կրիքուալէնտի և Օրանժի հանքերուն մէջ ի հարաւային Ափրիկէ: Բարեյոյսի անկիզաքարը, գլխաւորապէս կապոյտը, ունի թեթեւութիւն եւ ջերմամբ ոյժ: Քանատայի, Ռուսիոյ եւ Կիպրոսի մէջ ալ կայ: Անկէզի թելերը, որք երբեմն մինչեւ 30-35 սնդմ. երկար կ'ըլլան, կրնան հիւսուիլ առանձին կամ բուսական թելերու հետ: Անկէզը շատ բանի կը գործածուի: Անով կը շինեն թանձրաքարտ եւ թուղթ, առասան, չուան, անկիզելի հիւսուածոներ, թաղիք եւլն: Քիլոն 1 — 15 ֆրանք, հրապարակին համեմատ:

ԱՆԿՈՒԼԵՄ. — Ֆրանսական քաղաք, Բարիզէ 445 քմ. հե-

ուս : Հռչակաւոր են թուղթի գործարանները որք տարին 5 միլիոն քիւօ կ'արտադրեն : Կարեւոր վաճառականութիւն մանաւանդ օղիի (տարին 150,000 հարիւրալիտր), երկաթի, կաշիի, մեղրի, արմտիքի եւ արջաւի վրայ : Պանք տը Ֆրանս, Քրէտի Ֆօնսիէ, Քրէտի Լիօնէ, Քօնդուառ տիէսքօնդ մասնաճիւղեր ունին : Օրլէանի երկաթուղեաց կայարանն է :

ԱՆՎՈՒԱ. — Բորդուկէզ գաղթավայր Ափրիկէի հարաւ արեւմտեան կողմը : Սահմանն է հիւսիսէն Քօնկոյի գետը, արեւելքէն բրիտանական Զամպէզիա, հարաւէն գերմանական Ափրիկէ եւ արեւմուտքէն Ալլանտեան ովկէանոս : Մակերեսոյթ 1,315,460 քառ. քլմ. Բնակիչ 2 միլիոն : Կլիմայ վատառողջ : Տենդը կը տիրէ տարին ի բուն, մանաւանդ Փետր., Մարտ եւ Ապրիլ ամիսներուն մէջ : Ճարտարարուեստը շատ զարգացած չէ : Վաճառականութիւնը տեղի կ'ունենայ 2/3 մասով Անգլիոյ եւ մնացեալը Բորդուկալի հետ : Արտածեալ երեք գլխաւոր ապրանքներն են խահուէ, խէժ եւ մեղրամոմ : Նաեւ փղոսկր եւայլն : Խէժն եւրոպական հրապարակներու վրայ ծանօթ է Լօանսա անունով : Բորդուկէզ շոգենաւային ընկերութիւն մը ամէն ամսոյ 6ին եւ 23ին շոգենաւ կը հանէ Լիզպոնէն Անկուա : Երկու անգլիական շոգենաւային ընկերութիւններ ալ ամիսը անգամ մը շոգենաւ կը բանեցնեն Լիզբուրդի եւ Լօանտայի միջեւ որ Անկուայի նաւահանգիստներէն մին է : Լօանտա Բարեյոյսի եւ Եւրոպայի կցուած է ընդծովեայ պարանով : Գաղթավայրին հեռագրական գիծերը 417 քլմ. երկարութիւն ունին : Մէկ պանքա մը միայն կայ, այն է Բորդուկալի Պանքօ Նասիօնալի մասնաճիւղը : Տեղական թուղթերու զեղչի սահն է տարեկան 9% : Պանքան օտար երկիրներու վրայ թուղթ չի քաշեր : Անգլիական մէկ տուն կայ որ Լոնտոնի վրայ փոխանակագիր կը քաշէ : Ներածուած ուսի, ալքօլի եւ ուրիշ ոգելից ըմպելիներու վրայ 50 % տուրք կ'առնուի :

ԱՆՁՐՈՒԿ. (anchois, անդա պալըր). — Պզտիկ ձուկ մը, 10 սանդիմ երկայնութեամբ : Փորը ճերմակ, կռնակը կանաչ կամ կապոյտ, կ'ապրի Միջերկրականի մէջ եւ Ովկէանոսի եզերաց վերայ՝ (Սպանիա, Հոլանտա եւայլն) : Մարտ, Մայիս, Յունիս եւ Յուլիս ամիսներուն մէջ կ'որսացուին երկար ցանցերու միջոցաւ : Թարմ վիճակի մէջ շատ չեն ուտուիր, այլ ընդհանրապէս կ'աղուին : Աղելու համար նախ կ'ընտրեն պզտիկներն ու ճերմակները :

յետոյ գլուխը կը բրցունեն, աղիքը կը հանեն, կը լուան, կը չոր-
ցնեն եւ ապա տակառներու մէջ կը դնեն, իւրաքանչիւր շար-
քին վրայ աղ ցանելով: Իւղի մէջ ալ կը պահեն աղկերի (սառսեկա
պալըղը) եւ թիւնոսի (փալամոս) պէս: Լիվուրնի անձրուկները
շատ յարգի են: Նորվեկիոյ անձրուկները կ'անուշահոտուին: Անձ-
րուկը պատուական ուտելիք մ'է, հրինկէն աւելի փափուկ, աւելի
դիւրամարս: Ուստի ապաքինողներուն եւ հիւանդներուն կուտան,
իբր դրդիչ մարսողութեան: Բաղադրութիւնն է 22,3 % բնասպի-
տակերպ, 2,2 ճարպ, 3,7 հանքային նիւթեր, 51,8 ջուր, եւլն:
Աղը մաքրելու համար ջուրի կամ մանաւանդ կաթի մէջ կը ձգեն:
Անձրուկը ճգմելով կը շինեն կարագ, խմոր եւ համեմ: Այս վեր-
ջինն հրապարակի վրայ կը ծախուի anchovy sauce անունով:

ԱՆՆԱ. — Դրամ, որ կը գործածուի Ատէնի եւ Անգլ. Հնդկաս-
տանի մէջ: Մէկ ուրբիին 16րդ մասն է եւ կ'արժէ 28—30 փարա
ըստ անգլոյն:

ԱՆՆԱՄ. — Հնդկաչինու թերակղզիին արեւելեան եզերաց
վրայ, հիւս. լայնութեան 11—19 եւ երկայնութեան 101—107
աստիճանին միջեւ: Սահմանն է հիւսիսէն Թոնքին, հարաւէն եւ
արեւելքէն՝ Չինու ծովը, եւ արեւմուտքէն Քոչինչին: Մակերե-
ւոյթ 120,000 քառ. քիլմ. Բնակիչ 2,200,000: Կլիման 12⁰ սան-
դիկրատէն մինչեւ 37⁰ կ'երնէ: Ձմեռ չունի: Առողջապահական
կանոններու հետեւող Եւրոպացիք ազատ են տեղային հիւանդու-
թիւններէն (թանջք, ճահճային տենդ եւայլն): Առեւտրական
գլխաւոր կեդրոններն են Հուէ, Դուրան, որ կոչուած է Հնդկա-
չինու լաւագոյն նաւահանգիստն ըլլալու, Ֆաիֆո, կեդրոն ար-
տածման եւ մթերանոց Աննամի կեդրոնական նահանգներուն վա-
ճառականութեան, Քինոն, նաւահանգիստ, ուր կը հանդիպին Մէ-
սաթըրի չոգենաւները, Պէն-Թիւ, հրապարակ արջաուի եւ մե-
տաքսի եւայլն: Բուանկ-Լէյի մէջ կը մշակուի խահուէ, Բուանկ-
Համի մէջ՝ խահուէ, ծխախոտ եւայլն, Բիւ-Դուոնկի մէջ՝ թէյ:
Աննամի բրնձուտներու տարածութիւնն է 639.000 հեքթար, Կա-
սիան (քաշիկն) համբաւաւոր է եւ կ'արտածուի Չինաստան: Տարե-
կան արտադրութիւն մէկ միլիոն քիլո: Բազմաթիւ եզներ կ'ար-
տածուին ի Թոնքին եւ ձիեր՝ ի Սինկաբուր: Արհեստները շատ
յառաջացած չեն: Արտածումներն են շաքար, կասիա, եղ եւ ձի:

Մարտիլիայէն մինչեւ Դուրան շոգենաւի համար կը վճարուի 1675 Փր. Ա. կարգ եւ 605 Փր. Գ. կարգ: Ապրանքի նաւողչէքն է 70 Փր. առ մէն մի առեւտրական թօնօ: Աննամ իր բոլոր երկարութեան վրայ ծովեզերեայ ճամբայ մ'ունի, ուրկէ կ'անցնին ձիով կամ պատգարակով: Աննամ մասնակից է թղթատարական միջոցաւորին միութեան: Դրամներու մասին տեսէք Թօնֆին բառը:

ԱՆՈՒՆ. — Անունը մարդու մը ընկերային նշանն եւ անհատականութեան գրոշմն է: Առեւտրական տեսակէտով, անունը կերպով մը վաճառանիշ մ'է: Ամէն վաճառական բացարձակ իրաւունք ունի գործածել այն անունն որով կը շահագործէ իր վաճառատունը: «Առեւտրական անուն» բացատրութիւնը կը նշանակէ անուն մը որով կը ճանչցուի վաճառականը կամ գործարանատէրը: Երբ շահագործումը պատկանի առեւտրական ընկերութեան մը, կ'ըսուի ընկերային անուն: 1824ի Ֆրանսական օրէնքը գործարանատէրին անունը պաշտպանելով, ո'չ միայն կը պաշտպանէ բուն անունը կամ մականունը, այլ նաեւ կեղծ անունը, ընկերային և արհեստական անունները, մէկ խօսքով, բոլոր այն բառերը որոնք կը ծառայեն վաճառատուն մը ծանօթացնելու: Այս օրէնքը կը կիրարկուի նաեւ տեղւոյ անուններու համար: Համալուար տեղի մը անունը պէտք է որ նոյնքան պաշտպանուի չարաչափութենէ որքան գործարանատէրին անունը: Քաղաքներ կան որոնց արտադրութիւնները մեծ համբաւ հանած են: Այս համբաւը սեփականութիւն մ'է: Լուվիէի եւ Սըտանի կերպասներն իբր մասնաւոր տեսակներ կը նկատուին առեւտրական հրապարակին վրայ: Այս քաղաքներու գործարանատէրք հարկաւ կը ջանան արգելել որ ուրիշ կերպասներ, աւելի կամ նուազ համանման, չշփոթուին իրենց արտադրութեանց հետ կեղծ յայտարարութեամբ մը որ իրենց վարկը կոտորելու եւ յաճախորդը խաբելու կրկին անպատեհութիւնը պիտի ունենար: «Շինութեան վայր» բառերը պէտք է սահմանափակ իմաստով ըմբռնուին: Երբեմն կրնան պատշաճիլ ո'չ միայն քաղաքի մը եւ անոր արուարձանին, այլ նահանգի մը: Ընդհանրապէս կ'ընդունուի որ տեղւոյ մը անունը գործածելու իրաւունքը կը պատկանի ամէն անոնց որոնք քաղաքի մը մէջ եւ անոր աւելի կամ նուազ անմիջական շրջակայքը հաստատուելով կը շինեն այն ապրանքն որ համբաւ հանած է: Անունն այն քաղաքներուն ուր գործարանատէրներ յաջողած են ճարտարարուեստի տեսակներ ստեղծել, սեփականութիւնն է ա-

մէն անոնց որք իրենց գործունէութեամբ կը նպաստեն անոնց համբաւին, ո՛ր ատեն ալ հաստատուած ըլլան հոն, կը բաւէ որ գործարան մ'ունենան: Լոկ երեւոյթները փրկելու համար, կեղծօրէն ինքզինքը հաստատութեան մը վարիչ ճանչցողն իրաւունք չունենար 1824ի օրէնքէն օգտուելու: Վերապահութիւն մը կայ սակայն: Տեղւոյ մը անուան գործաձութիւնն ազատ է երբ հանրային հանգամանք մը առնէ, այսինքն երբ ծառայէ ցոյց տալ ո՛չ թէ ապրանքին ծագումը, այլ շինութեան մէկ եղանակը: Ըստ այսմ, իբր հանրային հանդամանք ունեցող կը նկատուին Մատսիլիոյ օճառ, Քօլօմէի ջուր, Շուէսի ձեռնոց, եւն. յորջորջումները: Դատարանները միայն կրնան որոշել թէ որո՞նք են այն անուններն որք հանրային հանգամանք մը առած են: Օրէնքը պատիժ կը տրամադրէ երբ մէկն ուրիշ անուն մը գործածէ յաւելմամբ, յապաւմամբ կամ ո՛ր եւ է փոփոխութեամբ: Անհրաժեշտ չէ որ գործածուած անունը գողցուած անունին ճիշտ նմանն ըլլայ: Ուրեմն, գողութիւն պիտի նկատուի նոյն իսկ երբ այդ անունին կցուի մականուն մը, կամ սա բառերէն մին «Դրութիւն այսինչի», «Նմանութիւն այնինչի» եւլն: Որպէս զի 1824ի օրէնքը գործադրուի, պէտք է որ «գործուած առարկայ» մը, այսինքն մարդկային գործունէութեան արտադրութիւնն ըլլայ ան որու վրայ կը դրուի անունը: Օրէնքը բացառութիւն կը սեպէ բնական արտադրութիւնները, ինչպէս հանքային ջուրերն եւ երկրագործական արտադրութիւններ որք փոփոխում մը չեն կըրած: Իրաւաբանք 1824ի օրէնքը գործադրելի կը նկատեն գինիներու համար, որք փոփոխութեան կ'ենթարկուին, եւ գեղարուեստական ու գրական գործերու համար, որոց վրայ հեղինակի մը կամ հրատարակչի մը անունը դրուած է կեղծօրէն: Ինչպէս կը տեսնուի, օրէնքին գործածած բառերը, — «գործուած առարկայ» — իրենց ամէնէն լայն առումով պէտք է ըմբռնուին: Օրէնքը չի գոհանար միայն գործարանատէրին յանցանքը պատժելով, այլ կը պատժէ նաեւ ծախողը, որ շրջաբերութեան կը հանէ զայն: 1857ի օրէնքին 19րդ յօդուածը մասնաւոր կանոններ ունի առեւտրական անունի խարդախութեան դէմ: Այս յանցանքը պատժելի է, եւ նկատի չառնուիր թէ ամբաստանեալը բարեմտութեամբ գործած է թէ ոչ, մինչ ծախողին համար այնպէս չէ: Ծախողն ա՛յն ատեն միայն ենթակայ է պատժոյ երբ «գիտութեամբ» գործած է: Լկէն անոնք որ իրենց անունը խարդախուած կը տեսնեն, իրաւունք ունին դատ բանալու: Կարգ մը հե-

ղինակներ մինչեւ իսկ կ'ըսեն թէ սպառողը, որ խարուած է կեղծ ապրանք մը գնելով, կրնայ դատ բանալ խարդախողին դէմ: Եթէ խարդախութիւնը տեղւոյ անուն է, հոն հաստատուած ամէն գործարանատէր կրնայ դատ բանալ իր անձնական անունով: Ընդհանուր դատախազն ալ իրաւունք ունի իր կողմէ դատ բանալու խարդախողին դէմ, առանց սպասելու որ փաստուած կողմը բողոքագիր տայ: Ահա թէ ինչպէս կը հաստատուի խարդախութիւնը: Դատ բացողը կրնայ դատարանին ներկայացնել նամակներ, հաշուեցոյցներ, վկաներ, խարդախողին ձեռքէն գնուած ապրանքներ եւայլն: Ընդհանրապէս կ'ընդունուի թէ դատարանին նախագահը կրնայ գրաւել կեղծ անուն կրող ապրանքները: Պատժական Ատ. եանները ձեռնհաս են դատելու այո կարգի գործերը: Այն որ միայն փաստաց հատուցում կը պահանջէ, պէտք է դիմէ առեւտրական դատարանին: Պատժական օրէնքին տրամադրութիւնք են երեք ամիսէն մէկ տարի բանտարկութիւն եւ դրամական տուգանք որ 50 ֆրանքէ վար չի կրնար ըլլալ:

Պատշաճութիւն առեւտրական անունին. — Անուղիղ մրցում. — Օրէնքը ո'չ միայն առեւտրական անունը կը պաշտպանէ ո' եւ է ապրանքի վրայ, այլ պատիժ կը տրամադրէ նաեւ երբ ծանուցումի մը կամ ո' եւ է առեւտրական թուղթի մը մէջ խարդախութիւն ըլլայ անունի մը վրայ: Այդ անունին տէրն իրաւունք ունի փաստաց հատուցում պահանջելու, անուղիղ մրցում մը նկատելով զայն:

Բաղդասական օրէնագրութիւն. — Գերմանիոյ մէջ, ինչպէս Ֆրանսայի եւ ուրիշ երկիրներու մէջ, վաճառականին անունը կը պաշտպանուի: Ֆիրման, այսինքն « անունը որով վաճառական մը կը վարէ իր գործերը », պէտք է արձանագրուի ըստ օրինի: Առեւտրական քօմանտիդ ընկերութեան մը ֆիրման պէտք է պարունակէ անձնապէս պատասխանատու ընկերներէն մէկուն անունը, կամ բոլոր ընկերներուն անունը, եթէ այդ ընկերութիւնը քօլէքդիֆ է: Անգամ մը արձանագրուելէն ետքը, պայմանաւ որ եղած փոփոխութիւնք ծանուցուին, ֆիրման նոյնը կը մնայ, դրամագլուխը կամ գործը ո'րին ձեռքն ալ անցնի:

Նմանօրինակ դրութիւն մը, աւելի կամ նուազ փոփոխութիւններով, ընդունուած է Աւստրիոյ, Բորդուկալի, Ռումանիոյ, Ռուսիոյ, Շուէտի եւ Զուիցերիոյ մէջ: Այս արձանագրութեան շնորհիւ ո'չ միայն կ'ապահովուի ֆիրմաներու տեւականութիւնը, այլ նաեւ առաջը կ'առնուի նմանաձայն անուններու շփոթու-

թեան: Ֆրանսայի մէջ, օտարական գործարանատեարք այն ատեն միայն կրնան դատ բանալ իրենց անունին խարդախութեան դէմ երբ իրենց երկրին մէջ ալ նոյն իրաւունքը տրուած է Ֆրանսացիներուն: 1824ի օրէնքը, որուն գլխաւոր նպատակն էր ֆրանսական ճարտարարուեստը պաշտպանել, չեղտած է այս փոխադարձութեան պայմանը: 1873 Նոյեմբ. 6ի օրէնքին Յրդ յօդուածն ալ այս պայմանին ոյժ տուած է: 1824ի եւ 1873ի օրէնքները նախատեսած չեն սա պարագան թէ օտար վաճառականք իրաւունք ունին իրենց արտադրութեան տեղերէն մէկուն անուան խարդախութեան դէմ բողոքել, բայց իրաւաբանք միաձայնութեամբ կը մերժեն այս իրաւունքը: Քիչ դաշնագիրներ Լկան որք առեւտրական անունի մասին տրամադրութիւններ պարունակեն: Չուրիցերիոյ, Անգլիոյ, Ռումանիոյ, Կուադէմալայի, Քօսդա-Ռիքայի եւ Բերուի հետ Ֆրանսայի կնքած դաշնագրերուն մէջ միայն ակնարկութիւններ կան առեւտրական անունի մասին:

ԱՆՈՒՇԱԴՐ (ammoniaque). — Անուշադրն արհեստական կերպով կը հանուի հանքային կազի շինութեան երկրորդական նիւթերէն, նեխեալ մէզէն եւայլն: Այրող անուշադրը բուն անուշադրին ջրային մասն է, որ ընդհանրապէս զեղնագոյն կ'ըլլայ կազմական նիւթերու պատճառաւ: Անուշադրն անգոյն կազ մ'է գրգռիչ հոտով եւ կիզիչ: Չուրին մէջ կը լուծուի: Կազային վիճակին մէջ չի գործածուիր: Ընդհակառակն իր չլուծեալ վիճակին մէջ ընթացիկ կիրառութիւն մ'ունի ճարտարարուեստի գրէթէ բոլոր ճիւղերուն մէջ: Բնագէտք անուշադրը կը գործածեն իբր հակազգող, ներկարարութեան մէջ կը գործածուի զանազան գործողութիւններու համար եւ բժշկութեան մէջ՝ մորթը շիկելու համար: Քանի մը կաթիլ անուշադր հզօր միջոց մ'է գինովութիւնն անցընելու: Անասնաբուծութեան մէջ ալ կը գործածուի:

ԱՆՈՒՇԵՂԷՆ. — Անուշեղէն շինելը ճարտարարուեստ մ'է, որ մեծ յառաջադիմութիւն ըրած է այսօր: Անուշեղէնի վաճառականութեան մէջ են օշարակները, չաքարապատ պտուղները, չաքարահատերը, աղնձանուշերը (praline), նուշէ կամ ընկոյզէ հրուշակները եւայլն: Անուշագործը չաքարին կուտայ ամէն ձեւ: Անով կը շինէ նաեւ ճարտարապետական առարկաներ, սեղաններու վարդարանքի համար: Այս ճարտարարուեստը, որուն կիրառութիւնները շատ են, կրնայ բաժնուիլ քանի մը գլխաւոր կարգե-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակի կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառացի »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վաճառականացի 12 օրու զատ ամեն ռզոզը պէտք է վճարէ 12 դրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկէրեան
Ներսիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Ներսիս, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիս, Կարապետ էֆ. Մալէճեանեան
Էրզնում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրզնա՛ն, Կարապետ էֆ. Գօճեան
Թեքիրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրիւն, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալէպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս Բհ. Շահինեան
Մարզուան, Ս. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղարեան
Պարսիգալ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիւմհանի քեոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Էօքրի » » »
Տիւրքիստի, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Բանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգէնը ք. կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակագրոյ՝ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (քանիս բնել): Նամակագրոյ կողմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: